



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 08/21

22.04.2021թ.

ք. Երևան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշման, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N 914-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրությանը (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Մասնավորապես՝ Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջապահության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» N 579 որոշման, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» N 914-Ն որոշման համապատասխանությունը Սահմանադրության 29-րդ, 60-րդ, 75-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերի, ինչպես նաև կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցմանն առնչվող ենթաօրենսդրական իրավական ակտերով ամրագրված չեն գործուն իրավական կառուցակարգեր՝ ուղղված կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում աշխատավայրում դժբախտ դեպքերի,

մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալուն:

ՀՀ կառավարությունը 2009 թվականի հուլիսի 23-ին ընդունել է «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» N 914-Ն որոշումը, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի 2-րդ մասը:

Պետք է նկատել, սակայն, որ վերոնշյալ և օրենսդրական հետագա փոփոխություններով լուծումներ չեն ամրագրվել այն դեպքերի համար, երբ կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում կապիտալացված գումարները չեն բավարարում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման համար:

Դիմողը քննարկվող իրավակարգավորումների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցին անդրադարձել է Սահմանադրությամբ երաշխավորված անձի սեփականության իրավունքի բովանդակության, դրա սահմանափակման համար սահմանադրական և միջազգային երաշխիքների, համաչափության, խտրականության արգելքի սկզբունքի, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու սահմանադրական պահանջների ապահովման համատեքստում:

Այդ նպատակով վերլուծության են ենթարկվել ինչպես Սահմանադրության և օրենքների կարգավորումները, այնպես էլ ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների համապատասխան իրավական դիրքորոշումները: Ուսումնասիրվել են նաև միջազգային չափանիշները, ստանձնած միջազգային պարտավորությունները և Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Ըստ Դիմողի՝ աշխատողների կրած վնասների հատուցման ընթացակարգերի լիարժեքությունը չապահովող օրենսդրական բացթողումները հակասում են նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին:

Արդյունքում, պարզ է դառնում, որ, ըստ Դիմողի՝ օրենսդրական համապատասխան կառուցակարգերի բացակայության պատճառով կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում աշխատողներին համարժեք կերպով վնասի հատուցում վճարելու երաշխիքներ ՀՀ-ում չկան:

### **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջապահության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» N 579 որոշման, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» N 914-Ն որոշման համապատասխանությունը Սահմանադրության 29-րդ, 60-րդ, 75-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերի, ինչպես նաև կյանքի կամ առողջությանը պատճառված վնասի հատուցմանն առնչվող ենթօրենսդրական իրավական ակտերով ամրագրված չեն գործուն իրավական կառուցակարգեր՝ ուղղված կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալուն:

Վիճարկվող նորմերի բովանդակությունը հետևյալն է.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի համաձայն՝

*1. Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում*

համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը: Նրան ներկայացվում են վնասի հատուցման մասին պահանջները:

2. Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար:

Օրենքով կամ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել վճարները կապիտալացնելու այլ դեպքեր:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածի համաձայն՝

Կազմակերպության լուծարման դեպքում աշխատողին պատճառված վնասը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով ենթակա է հատուցման:

ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ հաստատված են ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները:

ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N 914-Ն որոշմամբ հաստատված է կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը:

Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝

1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

2. Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Այսպես, վերը նշված նորմերի վիճարկման հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ ՀՀ գործող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով լուծումներ չեն ամրագրվել այն դեպքերի համար, երբ կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում կապիտալացված գումարները չեն բավարարում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման համար:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքն ամրագրում է գործատուի նյութական պատասխանատվության առաջացման դեպքերը: Մասնավորապես, օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործատուի նյութական պատասխանատվությունն առաջանում է, եթե աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից չապահովագրված աշխատողը հիվանդացել է մասնագիտական հիվանդությամբ, ստացել է խեղում կամ մահացել է: Նույն օրենսգիրքը սահմանում է նաև, որ կազմակերպության լուծարման դեպքում աշխատողին պատճառված վնասը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով ենթակա է հատուցման: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Վնասների հատուցումն իրավաբանական անձը դադարելու դեպքում» վերտառությամբ 1086-րդ հոդվածի համաձայն՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը: Նրան ներկայացվում են վնասի հատուցման մասին պահանջները: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար: Օրենքով կամ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել վճարները կապիտալացնելու այլ դեպքեր:

Ի կատարումն նշված նորմերի՝ ՀՀ կառավարությունը 2009 թվականի հուլիսի 23-ին ընդունել է «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» N 914-Ն որոշումը, որով, սակայն, լուծում չեն ստացել այն դեպքերը, երբ կազմակերպության լուծարման դեպքում կապիտալացված գումարները չեն բավարարում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման համար:

Հատկանշական է, որ դիմումում բարձրացված խնդրի լուծումն ապահովող դրույթը ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 26.08.2004թ.) ճանաչվել է ուժը կորցրած: Մասնավորապես, ՀՀ կառավարության 1992

թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետի համաձայն՝ *կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին:*

Արդյունքում, տվյալ փոփոխության հետևանքով փոխհատուցում ստանալու երաշխիքը վերացվել է այն դեպքերի համար, երբ պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 26-ից հետո:

Ստացվում է, որ կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած անձանց վնասի հատուցում ստանալու իրավունքի իրացման համար գործող իրավական կարգավորումներում չկան անհրաժեշտ կառուցակարգեր:

Հայաստանի Հանրապետությունը, իրեն հռչակելով իրավական պետություն, Սահմանադրության մեջ ամրագել է, որ մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (Սահմանադրության 3-րդ հոդված):

Սեփականության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով երաշխավորված մարդու հիմնական իրավունքներից է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տե՛ս, օրինակ, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44): ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը, իսկ 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Այսինքն՝ անձը, աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման դեպքում (իսկ նրա մահվան դեպքում՝ իրավահաջորդները) ակնկալում է համապատասխան վնասի հատուցում, սակայն ստացվում է, որ գործատու կազմակերպության լուծարման դեպքում, եթե դեպոնացված գումարները բավարար չեն կամ ընդհանրապես չկան, ապա վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող աշխատողը (իրավահաջորդը) մնում է առանց համապատասխան փոխհատուցման:

Ավելին, նշված կարգավորումը չի տարածվում նախքան ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1094-Ն որոշումն ուժի մեջ մտնելը կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավունք ձեռք բերած անձանց վրա: Արդյունքում, նույն կարգավիճակն ունեցող անձանց նկատմամբ գործում է 2 տարբեր իրավակարգավորում:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով անդրադարձել է խտրականության արգելման սկզբունքին, մասնավորապես, 2009 թականի փետրվարի 24-ի ՍԴՈ-792 որոշման մեջ արձանագրել է. «5. ՀՀ Սահմանադրության 1, 3 և 14.1 հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:»:

2008 թվականի հունվարի 29-ի ՍԴՈ-731 որոշման մեջ Սահմանադրական դատարանն ամրագրել է. «10. ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջների համապատասխան պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է



սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները: Մինչդեռ վիճարկվող նորմերը հնարավորություն չեն տալիս այն անձանց, որոնց ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթղթերը բացակայում են, հավասարապես օգտվել այն իրավունքից, որից օգտվում են ապահովագրական ստաժի վերաբերյալ փաստաթուղթ ունեցող անձինք: Վիճարկվող դրույթի կիրառմամբ ձևական հիմքով (ստաժը հիմնավորող փաստաթղթերի բացակայություն) անհավասար դրություն է ստեղծվում փաստացիորեն միևնույն ապահովագրական ստաժն ունեցող անձանց միջև:»:

ՄԴՈ–1142, 2 ապրիլի, 2014թ. «7. ... Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ (հոդվ.1), խտրականությունը բացառող հանգամանք (հոդվ. 14.1), աշխատողի շահի դրսևորում (հոդվ. 32), սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ (հոդվ. 37), պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ (հոդվ. 48), կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ (հոդվ. 89): Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հոշակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3–րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:»:

Խտրականության ցանկացած դրսևորման արգելման սկզբունքն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով, համաձայն որի՝ սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնանք Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության սկզբունքին, համաձայն որի՝ *հիմնական*

*իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Սահմանադրական դատարանը 2014 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1148 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:»:

Անդրադառնալով նաև մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «... Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):»:

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՈ-677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:»:

2015 թվականի դեկտեմբերի 08-ի ՄԴՈ-1244 որոշման մեջ արձանագրվել է հետևյալ դիրքորոշումը. «...Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով: Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար: ... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին:»:

Վերոգրյալից ելնելով՝ հանգում ենք հետևյալին. կազմակերպությունները, անկախ սեփականության ձևից, նյութական պատասխանատվություն են կրում իրենց մեղքով աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման համար, եթե այն առաջացել է կազմակերպության տարածքում կամ դրանից դուրս աշխատանքային պարտականություններ կատարելիս, ինչպես նաև կազմակերպության օգտին որևէ անհրաժեշտ գործողություն կատարելիս: Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դեպքում աշխատողը ձեռք է բերում վնասի հատուցման իրավունք: Նման հատուցումն իրականացնում է կազմակերպությունը, եթե չի ապացուցում, որ աշխատողի խեղումը, մասնագիտական հիվանդությունը կամ առողջության այլ վնասումն առաջացել է ոչ իր մեղքով: Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում համապատասխան հատուցում վճարելու պարտականությունը կրում է նրա իրավահաջորդը, իսկ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար:

Այլ է իրավիճակը, երբ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում կապիտալացված գումարները բավարար չեն վնասների հատուցման համար: Ստացվում է, որ աշխատողը ձեռք է բերել կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավունք, սակայն հատուցում չի ստանում, քանի որ մի կողմից՝ լուծարված կազմակերպության կապիտալացված գումարները բավարար չեն հատուցման համար, մյուս կողմից՝ պետությունը չի մշակել անհրաժեշտ մեխանիզմներ և կարգավորումներ՝ նման դեպքերում պետական բյուջեից հատուցումն իրականացնելու համար, այսինքն՝ պետությունն իր վրա չի վերցրել իր քաղաքացու սոցիալական ապահովության և սոցիալական պաշտպանվածության հարցը: Արդյունքում, իրեն սոցիալական հոչակած պետությունում ոտնահարվում են աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղում, մասնագիտական հիվանդություն և առողջության այլ վնասում ստացած անձանց իրավունքները, խտրական վերաբերմունք է դրսևորվում մինչև 2004 թվականի օգոստոսի 26-ը կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավունք ձեռք բերած անձանց և 2004 թվականի օգոստոսի 26-ից հետո նման իրավունք ձեռք բերած անձանց նկատմամբ:

Նշված մոտեցումը չի բխում սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքի երաշխավորման և համաչափության սկզբունքներից, չի համապատասխանում Սահմանադրությամբ սահմանված նպատակներին: Իրեն սոցիալական և իրավական հոչական պետությունը պարտավոր է ապահովել իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները, ապահովի անձանց սոցիալական ապահովության իրավունքի իրացումը և բացառի ցանկացած տեսակի խտրականություն: Աշխատողների կրած վնասների հատուցման ընթացակարգերի լիարժեքությունը չապահովող օրենսդրական բացթողումները հակասում են նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին:

#### **Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշման, ՀՀ

կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N 914-Ն որոշման  
համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

 Recoverable Signature

*Համակարգող՝*

**X** Lyudvik Davtyan

*Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169